

## ԿԱՐԾԻՔ

Դավիթ Էղիկի Հակոբյանի՝ «ԺԲ.00.02 - Հանրային իրավունք»  
մասնագիտությամբ «Զնանաչված պետությունների իրավական  
կարգավիճակի հիմնախնդիրների սահմանադրահրավական  
հետազոտությունը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակով)»  
թեմայով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Դավիթ Էղիկի Հակոբյանի ներկայացրած ատենախոսությունը վերաբերում է  
կարևոր և արդիական թեմայի՝ չճանաչված պետությունների իրավական  
կարգավիճակի հիմնախնդիրների սահմանադրահրավական հետազոտությանը։  
Այդ հիմնախնդիրները ուսումնասիրվել են՝ առանցքով ունենալով Լեռնային  
Ղարաբաղի Հանրապետության օրինակը, ինչը շատ բարդ և զգայուն  
հիմնախնդիր է՝ հատկապես 2020 թվականի արցախյան 44-օրյա պատերազմից և  
2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության բոնի  
տեղահանումից հետո։ Ատենախոսությունը ոչ միայն սահմանադրահրավական  
արժեքավոր հետազոտություն է, այլև հետաքրքրություն է ներկայացնում  
քաղաքագիտության, պատմագիտության, դիվանագիտության և միջազգային  
իրավունքի տեսանկյուններից, քանի որ աշխարհի տարբեր մասերում սուր կերպով  
ծառացած են չճանաչված պետությունների հետ կապված բազմաթիվ խնդիրներ,  
և չճանաչված պետությունների կարգավիճակի հստակեցումը շարունակում է մնալ  
միջազգային հանրության խրթին մարտահրավերներից մեկը։

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հետխորհրդային տարածքում ծագեցին բազմաթիվ  
համակարգային հարցեր, սրվեցին հակամարտությունները, և ծառացավ  
միջազգայնորեն ընդունված ազգերի ինքնորոշման իրավունքի, այդ թվում՝  
Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման  
հիմնախնդիրը։ Արցախյան հիմնախնդիրը չլուծվեց միջազգային իրավունքի  
հանրաճանաչ նորմերի և սկզբունքների հիման վրա, փոխարենը գործեց բիրտ  
ուժը՝ միջազգային մարդասիրական իրավունքի բոլոր սկզբունքների  
ոտնահարմամբ։

Այս իրավիճակում կարևորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես չճանաչված պետության սահմանադրաաիրավական կարգավիճակի բազմակողմանի ուսումնասիրությունը, որն ունի տեսական նշանակություն նմանատիպ հիմնախնդիրների լուծման առումով:

Ատենախոսը հստակ կերպով ձևակերպել է ուսումնասիրության առարկան և խնդիրները: Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմել են պատմական, համեմատաիրավական, համակարգակառուցվածքային և այլ ընդհանուր ու մասնագիտական մեթոդները: Ատենախոսությունն ունի գիտական, նորմատիվ իրավական անհրաժեշտ հիմքեր:

Դավիթ Հակոբյանն ուսումնասիրել է թեմային վերաբերող թե՛ հայ, թե՛ օտարերկրացի գիտնականների աշխատությունները, վերլուծել ժամանակակից հետազոտողների տեսակետները՝ չճանաչված պետական կազմավորումների և պետության ճանաչման չափանիշների վերաբերյալ, հղում կատարել համապատասխան նորմատիվ իրավական ակտերի՝ ապահովելով ատենախոսության պատշաճ աղբյուրագիտական հիմքը:

Ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական նշանակություն: Ատենախոսն առանձնացրել է չճանաչված պետություններ, որոնք լիարժեք հսկողություն են իրականացնում իրենց տարածքների նկատմամբ, ինչպես օրինակ՝ Մերձդնեստրը, Հյուսիսային Կիպրոսը, իրենց տարածքների նկատմամբ մասնակի հսկողություն իրականացնող պետություններ (Պաղեստին, Արևմտյան Սահարա) և միջազգային պրոտեկտորատի ներքո գտնվող պետություններ (Կոսովո): Ըստ ինքնիշխանության ճանաչման չափանիշի՝ տարբերակվել են չճանաչված (Լեռնային Ղարաբաղը, Մերձդնեստրը, Թամիլ-Իլամը, Վազիրիստանը, Շան պետությունը և այլ պետական կազմավորումները) և մասնակի ճանաչված պետությունները (Արխազիան, Հարավային Օսեթիան, Պաղեստինը, Արևմտյան Սահարան և այլն):

Ինչպես նկատում է հեղինակը, թեև ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը դեռևս 1949 թվականին չճանաչված պետությունների ճանաչման հարցը ընդգրկել է առաջնային թեմաների շարքում, սակայն մինչև այսօր հարցին համարժեք լուծում չի տրվել (ատենախոսության էջ 139): Ուստի, իրավացիորեն

առաջարկում է «միջպետական հարաբերությունների առավել ամբողջական և համապարփակ լուսաբանման, կանոնակարգման և միջազգային իրավունքի նոր սուբյեկտների ճանաչման նորմերի ամրագրման նպատակով միջազգային մակարդակում մշակել միասնական համալիր իրավական փաստաթուղթ, որը կարող է արտացոլել պետությունների ճանաչման բոլոր տեսակների, չափանիշների և ծերի առանձնահատկությունները, ինչն էլ իր հերթին կբացառի պետությունների տարերայնորեն և իրավիճակային ճանաչման դեպքերը» (Էջ 12):

**Ատենախոսության առաջին գլխում ուսումնասիրվել են չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափություններն ու առանձնահատկությունները:**

«Եղինակը դրսևորել է բազմակողմանի մոտեցում՝ ներկայացնելով թե՛ պատմական իրադարձություններից (Թայվան, Պաղեստին, Էրիթրեա և այլն), թե՛ ժամանակակից հակամարտություններից առաջացած պետությունները (Արխազիա, Մերձնեստր)՝ ապահովելով համեմատական վերլուծություն, ուսումնասիրության կենտրոնում ունենալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակը: Ատենախոսն ուսումնասիրել է ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքները, նշել ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, ՄԱԿ-ի, Ռուսաստանի Դաշնության և այլ դերակատարների ազդեցությունը չճանաչված պետությունների ճանաչման կամ չճանաչման գործընթացում, անդրադարձել «երկակի ստանդարտներին» (Էջեր 40, 135), որոնք գործում են քաղաքական ուսալիզմի և միջազգային իրավունքի շրջանակներում և քաղաքական որոշումները պայմանավորում ոչ թե պատմական ճշմարիտ իրողություններով, այլ գերտերությունների շահերով:

**Ատենախոսության 2-րդ գլուխը նվիրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրափական կարգավիճակի վերլուծությանը:**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դիտարկվում է որպես սահմանադրական իրավունքի և սահմանադրափական հարաբերությունների սուբյեկտ: Հեղինակը վերլուծել է ԼՂՀ Սահմանադրության մեջ ամրագրված իրավասությունները, որոնք որոշում են պետության սահմանադրափական կարգավիճակը, ներկայացրել մարդու, քաղաքացու և պետության միջև ծագող

սահմանադրահրավական հարաբերությունների էությունը՝ Հեռնային Դարաբաղի Հանրապետության գործունեության ընթացքում: Ներկայացվել են ՀՂՀ իմասկան պետական ինստիտուտների՝ Նախագահի, Ազգային ժողովի, Գերագույն դատարանի, Կառավարության, Գլխավոր դատախազի և այլ մարմինների կարգավիճակն ու լիազորությունները, կարևորվել պետության պատասխանատվությունը և իրավասությեկտությունը:

Ատենախոսը ներկայացրել է ՀՂՀ նպատակները, խնդիրները, գործառույթները, ընդգծել պետության սահմանադրական պատասխանատվության կարևորությունը՝ մարդու իրավունքների պաշտպանության, իշխանության ճյուղերի բաժանման և պետական մարմինների գործունեության հանրային վերահսկողության համատեքստում, պետություն-քաղաքացի, պետություն-ժողովուրդ հաարաբերություններում: Ողջունելի է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական հիմքերի վերլուծությունը արտասահմանյան պետությունների օրենսդրության և փորձի համադրմամբ, մասնավորապես՝ Գերմանիայի, Ռուսաստանի, Ալիվակիայի, այլ պետությունների սահմանադրական կարգավորումների օրինակով:

Դավիթ Հակոբյանն ուսումնասիրել է ՀՂՀ լիազորություններն ու խնդիրները քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում: Քննարկվել են ՀՂՀ իշխանության իրականացման ժողովորակարական ձևեր՝ հանրաքվե, ընտրություններ, քաղաքացիական հասարակության ինստիտուտներ և այլն: Ներկայացվել են քաղաքացիների մասնակցության, անմիջական և ներկայացուցական ժողովորակարության արդյունավետ համադրման խնդիրները, ընտրական գործընթացների թերությունները, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության մյուս ինստիտուտների չիրացված ներուժը: Այս ամենը դիտարկվել է ՀՂՀ Սահմանադրության, ընտրական օրենսդրության և քաղաքական համակարգի համատեքստում: Ներկայացվել են առաջարկություններ «Պետական և հասարակական կյանքին վերաբերող կարևորագույն հարցերի համաժողովրդական քննարկման մասին» օրենքի ընդունման, Հանրային

պալատի՝ որպես քաղաքացիների ինքնակազմակերպման ինստիտուտի ստեղծման հնարավոր մոդելի վերաբերյալ:

Համամիտ ենք հեղինակի այն մոտեցումներին, որ կառավարման արդյունավետությունը պայմանավորված է կենտրոնացված և ապակենտրոն կառավարման ճիշտ համադրությամբ, կամ, որ պետության ուժը ոչ թե կենտրոնացման, այլ արդյունավետության, մասնակցության և ինքնակառավարման հնարավորության ապահովման մեջ է:

**Ատենախոսության 3-րդ գլուխը վերաբերում է Անդրկովկասում չճանաչված պետությունների իիմնախնդիրներին և զարգացման հեռանկարներին:**

Հեղինակն ուսումնասիրել է Անդրկովկասի չճանաչված պետությունների կազմավորման առանձնահատկությունները՝ միջազգային իրավունքի և քաղաքական գործընթացների համատեքստում: Հիմնավորել է, որ խորհրդային իշխանության վարած քաղաքականությունը, ապա խորհրդային միության վիլուգումը և ինքնակարությունների վերացումը, ինչպես նաև նորանկախ պետություններում ազգային փոքրամասնությունների հարցերի անտեսումը հանգեցրել են տարածքային հակամարտությունների և դրանց արդյունքում չճանաչված պետական կազմավորումների ծևավորմանը:

Նշվել է, որ Վրաստանն ու Ադրբեջանը իրենց պահանջները իիմնավորել են տարածքային ամբողջականությամբ, սակայն լուրջ խնդիրներ են ստեղծվել ազգային ինքնորոշման իրավունքի հետ կապված, հատկապես՝ Աբխազիայում, Հարավային Օսիայում և Լեռնային Ղարաբաղում:

Ուսումնասիրվել են չճանաչված պետությունների ճանաչման միջազգային ու աշխարհաքաղաքական խնդիրները, անդրադարձ է կատարվել չճանաչված պետությունների անցումային կարգավիճակին, ըստ որի չճանաչված պետությունները կարող են լինել ժամանակավոր: Նշվել է երեք իիմնական սցենար՝ դառնալ լիարժեք անկախ պետություն, միավորվել նախկին մետրոպոլիայի հետ (կլանվել) կամ պահպանել չճանաչված կարգավիճակը երկար ժամանակ: Համամիտ ենք, որ Անդրկովկասի չճանաչված պետությունները դարձել են աշխարհաքաղաքական պայմանավորվածությունների մաս, քանի որ Անդրկովկասը տարածաշրջան է, որտեղ հատվում են գլոբալ և

տարածաշրջանային դերակատարների՝ Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի, այլ երկրների կենսական շահերը՝ էներգետիկ և այլ ռազմավարական նշանակության ռեսուրսների հետ կապված:

Նշվում է, որ «...Ադրբեյջանը պատրաստ էր զիջել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնավարության հարցում:» (էջ 137), սակայն ԼՂՀ-ն անգամ ինքնավարություն չստացավ, այլ ենթարկվեց չհայտարարված զինված հարձակման, այնուհետ ամբողջական, իյուծող շրջափակման, ապա ժողովրդի բռնի տեղահանման՝ հայրենազրկման:

### **Ատենախոսությունը գերծ չէ թերություններից: Այսպես՝**

1. Ատենախոսը հանգել է այն եզրակացության, որ ճանաչման ինստիտուտը դեռևս շարունակում է մնալ չկողիֆիկացված, և որպես գիտական նորույթ առաջարկում է. «յուրաքանչյուր ճանաչված պետության իրավական համակարգում անհրաժեշտ և կարևոր պայման պետք է դիտարկել ներպետական այնպիսի նորմատիվ իրավական ակտի՝ պայմանականորեն «Նոր պետությունների (պետական կազմավորումների) ճանաչման մասին» վերտառությամբ օրենքի առկայությունը, որը կոչված կլինի կարգավորելու սահմանադրական մարմինների (Հանրապետության Նախագահ, Վարչապետ, Ազգային ժողով) մակարդակով միջազգային ճանաչման ոլորտի հարաբերությունները, սահմանելով՝

- ա) պետությունների ճանաչման հայեցակարգը,
- բ) ճանաչման ընթացակարգը,
- գ) տվյալ սուբյեկտի հետ իրավահարաբերությունների կառուցման ընդհանուր սկզբունքները,
- դ) ճանաչման իրավական հետևանքները» (ատենախոսության էջ 11):

Մենք գտնում ենք, որ նոր պետությունների ճանաչման հարցը պահանջում է կարգավորում նախ միջազգային իրավական փաստաթղթերով ու կառուցակարգերով, որոնց հիման վրա կարող են ընդունվել համապատասխան ներպետական նորմատիվ իրավական ակտեր:

2. Ատենախոսության որոշ ենթագլուխներում վերլուծված նյութը հստակորեն չի ամփոփվում, օրինակ՝ 1.1, 1.2 ենթագլուխներում չճանաչված պետությունների

իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափությունները, առանձնահատկությունները որոշակիացման կարիք ունեն:

3. Եզրակացության ամփոփիչ դրույթներում կան կրկնություններ, օրինակ՝ 25-րդ կետում նշվում է, որ «Միջպետական հարաբերությունների առավել ամբողջական և համապարփակ լուսաբանման, կանոնակարգման և միջազգային իրավունքի նոր սուբյեկտների ճանաչման նորմերի ամրագրման նպատակով անհրաժեշտ է մշակել միասնական համալիր իրավական փաստաթուղթ, որը կարող է արտացոլել պետությունների ճանաչման բոլոր տեսակների, չափանիշների և ձևերի առանձնահատկությունները:» (Էջ 166): Իսկ 27-րդ կետում արվում է Եզրահանգում այն մասին, որ «Նոր պետությունների ճանաչման հետ կապված խնդիրների արդյունավետ լուծման համար նախ և առաջ անհրաժեշտ է մշակել արդյունավետ գործող նորմատիվ-իրավական բազա և դրա իրավակիրառ մեխանիզմներ՝ դրանք կիրառելով ճանաչման կարիք ունեցող պետությունների նկատմամբ:» (Էջ 167):

4. Թեև ատենախոսության մեջ նշվում է 1994թ. Բիշքեկյան արձանագրության (Էջեր 158-159), ապա նաև ՄԱԿ-ի և Եվրոպական կառույցների դերակատարության մասին, սակայն անհրաժեշտ էր հստակ ներկայացնել բուն գործընթացը:

Անդրադարձ է կատարվում 2006 թվականին ԱՍԴ-ի ներկայացրած ծրագրին (Էջ 159), սակայն, մեր կարծիքով, կարելի էր ավելի պարզորոշ շեշտադրել այդ ծրագրի բացասական և դրական կողմերը:

5. Ատենախոսությունն ունի հավելված՝ ներկայացնելով չճանաչված պետությունների ոչ սպառիչ ցանկը: Կարծում ենք, ուսումնասիրության գործնական նշանակությունը կշահեր, եթե ատենախոսությունը ունենար նաև 2-րդ հավելված, որը կբովանդակեր ամփոփ տեղեկանք՝ ժամանակագրական կարգով արձանագրելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացման ու սահմանադրական զարգացման փուլերը, ընտրական գործընթացները:

Ուսումնասիրությունում առկա են որոշ վրիպակներ, ոճական սխալներ: Վերոհիշյալ թերություններն ու բացթողումները չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը:

Այսպիսով, Դավիթ Էդիկի Հակոբյանի՝ «ԺԲ.00.02 - Հանրային իրավունք» մասնագիտությամբ      «Զնանաչված»      պետությունների      իրավական

## Կարգավիճակի

## ԻԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ

## սահմանադրահրավական

հետազոտությունը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, ունի գիտական նորույթ, տեսական և գործնական արժեք: Ուստի, հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

## Պաշտոնական ընդդիմախոս՝

Y. T. Goyard

Հրանուշ Հակոբյան  
Իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

03.11.2025 p.

## Հրանուշ Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ:

## Գավառի պետական համալսարանի գիտական քարտուղար՝

Թաթով Ասոյան  
Բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

03.11.2025 p.

